օրն որ կայսրը երեսփոխանաց սենեկին նիստը պիտի բանար, երիտասարդ մը Օրէնսդիր Ժողովքին հրապարակին մէջ կառքէն վար իջնալու ատեն՝ կըռնըկի վրայ սահեցաւ ինկաւ. աս իյնալու ատենը վառօդի ծրար մը ունենալով գրպանը՝ բռնկեցաւ: այս երիտասարդը նոյն ինքն Լա Սահլա էր: Աս անգամ որ քննեցին զինքը, որոշ ու անշփոթ պատասխաններ տալով՝ ամենայն ազդուութեամբ ուրացաւ որ զկայսրը սպաննելու դիտաւորութիւն մը չունէր: Բայց վերջը երբոր վտանգը անցաւ, բոլորովին ետ առաւ ըսածը և յայտնեց որ միայն կայսեր կեանքը վերցնելու համար՝ նորէն Գաղղիոյ երկիրը ոտք կոխեր էր: Լա Սահլա իր հայրենիքը մեռաւ:

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

*Գլխաւոր աշխարհագրական գիւտերու թուականն ու գտողներուն անունները :*

| | Տարին |
|---|---|
| Իսլանտա (գտած է Նատտոտ սկանտինաւիացի հուզկահարը). | 861 |
| Կրէնլանտ (Կունպիռն իսլանտացին). | Էհր 970 |
| Գանարեան կղզիք (գենուացի ու կաղալոնիացի նաւորդներ). | 1345 |
| Գանարեան կղզեաց նուաճումը, Յովհաննէս տը Պէթէնգուր Նորմանտացւոյն ձեռքով. | 1401—1405 |
| Բորդօ-Սանդօ (Դրիսդան Վազ ու Զարգօյ բորդուգալցիները). | 1418 |
| Մատէյրա (նոյները). | 1419 |
| Սպիտակ Սար (Նունոյ Դրիսդան բորդուգալցին). | 1440 |
| Ազորեան կղզիք (Կոնսալվօս Վէլօյ բորդուգալցին). | 1448 |
| Կանաչ Գլխոյ կղզիք (Անտոն Նօլի գենուացին). | 1449 |
| Կուինէայի ափունքը (Յովհաննէս Սանդարէմ ու Պետրոս Էսգօպար բորդուգալցիք). | 1471 |
| Գոնկօ (Տիէկօ Գամ բորդուգալցին). | 1484 |
| Բարեյուսոյ Գլուխ (Տիաս բորդուգալցին). | 1486 |
| Ամերիկա, Ս. Փրկիչ կղզին 11—12 հոկտեմբերին գիշերը (Քրիստափոր Գոլոմպոս գենուացին). | 1492 |
| Անդիլեան կղզիք (Քրիստափոր Գոլոմպոս). | 1493 |
| Երրորդութիւն կղզի (Քրիստափոր Գոլոմպոս). | 1498 |
| Հնդկաստան, Ափրիկէի արևելեան ափունքները, Մալապարի ափունքը (Վասգօ Կամա). | 1498 |
| Ամերիկա, արևելեան ափունք (Օյէտա և Ամերիկոս Վեսբուչչի). | 1497էն 1499 |
| Ամազոնեաց գետ (Վինկէնտիոս Բինսոն). | 1500 |
| Պրազիլ (Ալվարէզ Գապրալ բորդուգալցին). | 1500 |
| Նոր-Երկիր կղզին (Գորդէրէալ բորդուգալցին). | 1500 |
| Ս. Հեղինէ կղզին (Յովհաննէս Նովա բորդուգալցին). | 1502 |
| Սէյլան կղզին (Լաւրենտիոս Ալմէյտա). | 1506 |
| Մատակասգար (Դրիսդան Գունհա). | 1506 |
| Սումադրա (Սիքուէյրա բորդուգալցին). | 1508 |
| Մալագգա (Սիքուէյրա). | 1508 |
| Սոնտի կղզիք (Ապրէօ բորդուգալցին). | 1511 |
| Մոլուգգա կղզիք (Ապրէօ և Սէրրանօ). | 1511 |

Տարին

Ֆլորիտա ( Բոնս Լէոնցին ). 1512<br>
Ծով Հարաւոյ ( Նունեէզ Պալպօա ). 1513<br>
Բերու ( Բերէզ տէ լա Ռուա ). 1515<br>
Ռիօ-Ժանէյրօ ( Տիաս տէ Սօլիս ). 1516<br>
Ռիօ Բլադա ( նոյնը ). 1516<br>
Չինաստան ( Փերնանտ տ'Անտրատա բորդուգալցին ). 1517<br>
Մեքսիգօ ( Փերնանտ Գորտովացին ). 1518<br>
Մեքսիգոյի նուաճումը՝ Փերնանտ Գորդէսի ձեռքով 1519<br>
Երկիր Հրոյ կղզին ( Մակէլլան ). 1520<br>
Աւազակաց կղզիք ( Մակէլլան ). 1521<br>
Փիլիպպեան կղզիք ( Մակէլլան ). 1521<br>
Ամերիկա հիւսիսային ( Յովհաննէս Վերազանի ). 1523<br>
Բերուի նուաճումը Պիզարրոսի ձեռքով. 1524<br>
Պերմուտ կղզի ( Յովհաննէս Պերմուտեզ սպանիացին ). 1527<br>
Նոր-Կուինէա ( Անդրէաս Սիտամեդա սպանիացին ). 1528<br>
Ագաբուլգոյի մերձաւոր ափունքները, Գորդէսի հրամանաւ. 1534<br>
Գանատա ( Յակոբոս Գարդիէ գաղղիացին ). 1534 և 1535<br>
Գալիֆոռնիա ( Գորդէս ). 1535<br>
Չիլի ( Տիէկօ տէ Ալմակրօ ). 1536 և 1537<br>
Աքատիա ( Ռոպէրվալ գաղղիացին ). 1541<br>
Գամպոճա ( Անտոն Ֆարիա Սուզա և Փերնանտ Մենտեզ Բինդօ ). 1541<br>
Լիքէյոյ կղզիները ( նոյները ). 1541<br>
Հայնան կղզին ( նոյները ). 1541<br>
Ճաբոն ( Տիէկօ Ժամոտօ և Քրիստափոր Պօրէլլօ արեւմտեան կողմը. Փերնանտ Մենտեզ Բինդօ արեւելեան կողմը՝ 'ի Պունկօ ). 1542

---

Նուքուդս ժողովուրդը :

Սիպերիոյ մէջ բնակած ժողովուրդներէն մէկն ալ Նուքուդս կամ Նուքուդ ըսուածն է, որ Թաթարաց ցեղէն են. ասոնց սովորութիւնները հետաքննական ըլլալով ըստ բաւականին, կ'ուզենք հոս համառօտ տեղեկութիւն մը տալ մեր ընթերցողացը :

Այս ժողովուրդը, որ մեծաւ մասամբ կուապաշտ է, այլ և այլ դիրքով տեղեաց մէջ նոյն չէ մարմնոյ կազմութեամբ : Ան մասն որ Սիրքոյեաւքի լերանց հարաւային կողմերը գտնուած դաշտագետիններու վրայ կը բնակին, ընդհանրապէս հասակնին 5 ոտք 10 բթաչափէն ինչուան 6 ոտք 4 բթաչափ բարձրութեան կը հասնի. ասոնք բարեկազմ, զօրաւոր և գործունեայ են : Իսկ անոնք որ աս լեռներուն հիւսիսային կողմերը կը բնակին, բոլորն ալ կարճահասակ են, ծոյլ, վատառողջ, և կարծես թէ աս իրենց թերութիւնները կէս մը կլիմային սաստիկ ցրտութենէն ու զգեստի կարօտութենէն առաջ կու գան :

Ամուսնութեան արարողութիւնները երկայն ու կարգէ դուրս հանդէսներ են Նուքուդներու մէջ : Երբոր մէկը կ'ուզէ աղջկան մը հետ կարգուիլ, կը ղրկէ իր բարեկամներէն մէկը անոր հօրը՝ որ երթայ խօսի թէ որչափ ձի ու որչափ կովու գլուխ կ'ուզէ իրմէն, և թէ որչափ միս պէտք է հարսանեաց կոչունքին համար : Ան ատեն աղջկան հայրը նախ մէյ մը իր աղջկանը հետ կը խօսի ու կը հարցնէ թէ արդեօք ան անձին հետ կարգուելու յօժարութիւն մը ունի. և երբոր ընդդիմութիւն մը